



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » դեկտեմբերի 2020թ. № 294

ՍՈՒՍԱՆՆԱ ՆՈՐԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով և 16-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման 3-րդ կետի «է» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 1997 թվականի հունիսի 30-ի թիվ 148 որոշմամբ Սուսաննա Նորիկի Ղազարյանի ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով փոխանցված Բանական թաղամասում գտնվող բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 06-006-0061-0003 կադաստրային ծածկագրով 0,15787 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողի հարկի վճարման անդորրագրերը, «Ինէքս» ՍՊԸ-ի կողմից տրամադրած անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Անահիտ Ռաֆիկի Այվազյանի ներկայացուցիչ Քրիստինե Սողոմոնյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Վերականգնել հողատեղացման հիմքերը և օրենքի ուժով ճանաչել Սուսաննա Նորիկի Ղազարյանի (ծնված 26.11.1953թ.) և նրա ընտանիքի անդամների՝ Ռաֆիկ Սենիկի Այվազյանի (ծնված 03.01.1949թ.), Աշխեն Ռաֆիկի Այվազյանի (ծնված 06.09.1975թ.), Անահիտ Ռաֆիկի Այվազյանի (ծնված 09.02.1978թ.) և Սիմոն Ռաֆիկի Այվազյանի (ծնված 03.03.1981թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Բանական թաղամասում գտնվող 06-006-0061-0003 կադաստրային ծածկագրով

0,15787 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Բանավան թաղամաս, թիվ 102 » հասցեն:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Սուսաննա Նորիկի Ղազարյանին, Ռաֆիկ Սենիկի Այվազյանին, Աշխեն Ռաֆիկի Այվազյանին, Անահիտ Ռաֆիկի Այվազյանին և Սիմոն Ռաֆիկի Այվազյանին՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմել Սպիտակի համայնքապետարան սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վրա առկա բնակելի նշանակության 77,01 քառակուսի մետր մակերեսով ինքնակամ կառույցներն օրինականացնելու գործընթաց սկսելու նպատակով:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:



Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 25
ք.Սպիտակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» դեկտեմբերի 2020թ. № 295-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի
սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման և օտարման
աճուրդի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ԲԱԿԱԿՅԱՆ

2020 դեկտեմբերի 15
ք. Սպիտակ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի (այսուհետ՝ համայնք) սեփականություն հանդիսացող գույքը (բացառությամբ համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերի), այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 37-րդ, 43-րդ և 43.1-րդ կետերով նախատեսված դեպքում ինքնական կառույցի (այսուհետ՝ գույք) օգտագործման՝ վարձակալության տրամադրման և գույքի օտարման աճուրդի (այսուհետ՝ աճուրդի) կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Գույքի վարձակալության կամ օտարման աճուրդների դեպքում բացի մեկնարկային գնից այլ գնային սահմանափակումներ չեն կիրառվում և աճուրդները կատարվում են այն դեպքում, երբ գնորդից (վարձակալից) չի պահանջվում որևէ պայմանի կատարում:

3. Գույքի վարձակալության կամ օտարման աճուրդի անցկացման նպատակով համայնքի ղեկավարը ստեղծում է աճուրդային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

4. Կազմակերպիչը պարտավոր է վարել փաստաթղթային գրառումներ և պահպանել աճուրդի հետ կապված փաստաթղթերը (պայմանագրերը, արձանագրությունները և այլն) աճուրդի ավարտից 3 տարվա ընթացքում:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

5. Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետներ և ավագանու անդամներ:

6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է հանձնաժողովի անդամների կեսից ավելիի մասնակցության դեպքում: Հանձնաժողովի նիստը ոչ իրավազոր լինելու դեպքում աճուրդի կազմակերպիչը նշանակում է նոր նիստ՝ ընդ որում, նոր նիստի օրվա և ժամի մասին

հանձնաժողովը պատշաճ տեղեկացնում է աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված ժամկետներում աճուրդի մասնակցության հայտ ներկայացրած բոլոր անձանց:

7. Հանձնաժողովն իրավասու է աճուրդի արդյունավետ իրականացման նպատակով աճուրդը նախապատրաստելու և կազմակերպելու համար ընդգրկել մասնագիտացված կազմակերպություն(ներ):

8. Հանձնաժողովը հաստատում է գույքի աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցման տեքստը:

9. Հանձնաժողովն անցկացնում է աճուրդը, ինչպես նաև որոշում աճուրդի հաղթողին:

10. Աճուրդի վերջնական արդյունքներն ամփոփվում են համաձայն սույն կանոնակարգի անբաժանելի մաս հանդիսացող Ձև 2-ով սահմանված արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն):

III. ԱՃՈՒՐԴԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

11. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցով և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ աճուրդի անցկացման օրվանից առնվազն 15 օր առաջ:

12. Աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) աճուրդի կազմակերպչի անվանումը,

2) աճուրդի կազմակերպման վայրը (հասցեն),

3) աճուրդի անցկացման օրը և ժամը (ընդ որում աճուրդը պետք է սկսվի 09.00-18.00 ընկած ժամանակահատվածվում և ավարտվի հրապարակային ծանուցման մեջ նշված օրը),

4) աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ նշելով ժամը և օրը,

5) աճուրդի հաղթողին որոշելու կարգը,

6) աճուրդով օտարվող կամ վարձակալության տրամադրվող գույքի անվանումը, աճուրդի պայմանները,

7) աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, մասնավորապես,

ա. աճուրդի մասնակցության համար սահմանված տեղական վճարի մուծումը հաստատող փաստաթղթի պատճենը,

բ. պետական գրանցման վկայականի և հիմնադիր փաստաթղթերի պատճենները՝ իրավաբանական անձանց համար, ֆիզիկական անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

գ. հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը),

8) աճուրդի մասնակցության նախավճարի չափը, ինչպես նաև նախավճարի վճարման կարգը և ժամկետները, աճուրդում հաղթող չճանաչվելու դեպքում նախավճարի հետ վերադարձման կարգը,

9) աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը և կանոնակարգի պատճենը տրամադրելու կարգը,

10) լոտն ուսումնասիրելու ամսաթիվը, ժամանակը և վայրը,

11) ընդհանուր աճուրդի դեպքում՝ լոտերի վաճառքի կամ վարձակալության տրամադրման հերթականությունը,

12) աճուրդի պայմանները, այդ թվում՝ լոտի (լոտերի) անվանումը, լոտի նկատմամբ սահմանափակումները, եթե լոտն առարկա է, ապա նրա ֆիզիկական վիճակը (մաշվածությունը) և (կամ) արտադրման տարեթիվը, լոտի մեկնարկային գինը, լոտի իրավունք լինելու դեպքում՝ այդ իրավունքի գործողության ժամկետը, ինչպես նաև էական այլ պայմանները.

13) հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գինը վճարելու կարգը,

14) այլ տեղեկություններ:

13. Աճուրդի պայմանների փոփոխման դեպքում հանձնաժողովը պարտավոր է անհապաղ կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Հրապարակային ծանուցման փոփոխությամբ թույլատրվում է կատարել լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Աճուրդի էական պայմանների փոփոխման դեպքում անհրաժեշտ է կատարել նոր հրապարակային ծանուցում՝ նախկին ծանուցումը հայտարարելով չեղյալ:

IV. ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒ ՄԱՍՆԱԿԻՑ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

14. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի դաիլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:

15. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին.

ա. չհայտնել իրենց դժգոհությունը, սպառնալիքը կամ գոհունակությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի գործողությունների նկատմամբ,

բ. չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի,

գ. հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ:

դ. աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ՝ բացառությամբ ընդհանուր աճուրդի դեպքում լոտերի աճուրդների միջև ընկած ժամանակահատվածի՝ աճուրդավարի թույլտվությամբ,

ե. չթաքցնել օրենքով սահմանված՝ աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

V. ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԼՈՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

16. Աճուրդի մասնակցության հայտերի և պահանջվող փաստաթղթերի ընդունումը, գրանցումը և մասնակցի վկայականի տրամադրումը սկսվում է հրապարակային ծանուցման պահից և դադարում է աճուրդի հրապարակային ծանուցմամբ սահմանված ժամկետում:

17. Աճուրդի անցկացման մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված ժամկետում արճուրդն անձանագրողն ընդունում է սույն կանոնակարգի անբաժանելի մաս հանդիսացող Ձև 1-ով հաստատված աճուրդի մասնակցության հայտերը (այսուհետ՝ հայտ):

18. Աճուրդի մասնակցության հայտերը՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով, ներկայացվում են անձամբ:

19. Աճուրդի հայտատուները հրապարակային ծանուցմամբ սահմանված կարգով, չափով ու ժամկետներում մուծում են աճուրդի մասնակցության վճար:

20. Աճուրդին մասնակցության իրավունք ձեռք բերած անձանց տրվում է վկայական, որում նշված համարով հանդես են գալիս աճուրդում:

21. Աճուրդի մասնակից չհամարվող անձինք համայնքի բյուջեի համապատասխան հաշվին վճարում են մուտքի վճար՝ 5000 ՀՀ դրամ և աճուրդի գործընթացին մասնակցում են դիտորդի կարգավիճակով:

22. Աճուրդի մասնակից չհամարվող անձանց գրանցումը դադարեցվում է աճուրդը սկսվելուց 30 րոպե առաջ:

23. Աճուրդին կարող են մասնակցել հայտ ներկայացնողները կամ նրանց կողմից լիազորված անձինք:

24. Աճուրդի կազմակերպիչը հրապարակային ծանուցման պահից սկսած ընձեռում է հնարավորություն լուտը (լուտերը) ուսումնասիրելու համար՝ հրապարակային ծանուցման պահից մինչև հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ յուրաքանչյուր չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի):

25. Եթե վաճառվող լուտն իրավունք է, ապա աճուրդի կազմակերպիչը պարտավոր է հնարավորություն տալ մասնակիցներին սույն կանոնակարգի 23-րդ կետում նշված կարգով և ժամկետներում ուսումնասիրելու համապատասխան օբյեկտը, որի նկատմամբ գոյություն ունի իրավունքը, ինչպես նաև համապատասխան իրավահաստատող փաստաթղթերը:

26. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

VI. ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՅՈՒՄԸ

1. ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՒՐԴ

27. Աճուրդը վարում է աճուրդավարը, որը հրապարակում է վաճառվող կամ վարձակալության տրամադրվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային գինը, աճուրդային քայլի չափը, որը սահմանվում է գույքի մեկնարկային գնի առնվազն 5 տոկոսի չափով:

28. Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր վկայականին համապատասխանող համարը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու կամ վարձակալելու մասին:

Յուրաքանչյուր գնորդ կամ վարձակալ կարող է գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ քայլի չափից ոչ պակաս գումարով:

29. Աճուրդավարն աճուրդը շարունակում է այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին (առավելագույն վարձավճար) առաջարկած մեկ մասնակից, որից հետո աճուրդը դադարեցվում է:

30. Հայտարարված գնով գույքը ձեռք բերելու կամ վարձակալելու համաձայնություն չլինելու դեպքում աճուրդավարը կրկնում է մեկնարկային գինը:

31. Գույքի առավելագույն արժեք կամ վարձավճար առաջարկած մասնակիցը աճուրդավարի կողմից առաջարկված գինը 3-րդ անգամ հայտարարելուց հետո ճանաչվում է

աճուրդի հաղթող և պարտավոր է 30 րոպեի ընթացքում ներկայացնել մասնակցի վկայականն ու վճարել գույքի մեկնարկային գնի կամ վարձավճարի առնվազն 5 տոկոսի չափով նախավճար (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարման միջոցներով), որը սահմանված ժամկետում հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է համայնքի բյուջե՝ համապատասխան հաշվին: Գնորդը կամ վարձակալը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով:

32. Վճարման դեպքում՝ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը ընդգրկվում է հաղթողի (գնորդի կամ վարձակալի) կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

33. Եթե աճուրդում հաղթողը չի կատարում սույն կարգի 31-րդ կետի պահանջները, ապա նրա մոծած մասնակցության վճարը չի վերադարձվում, և նա զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից ու դուրս է հրավիրվում դահլիճից: Այդ դեպքում գույքի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից:

34. Եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, ապա աճուրդավարը վիճակահանությամբ որոշում է աճուրդում հաղթող համարված մասնակցին:

35. Վիճակահանությամբ աճուրդում հաղթող համարված մասնակցի որոշումը կատարվում է հետևյալ պայմաններով.

հանձնաժողովի անդամները բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ որոշում են միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին, այնուհետև մասնակիցների մասնակցի վկայականին համապատասխան համարը պարունակող քառաձալ թղթերը դրվում են ծրարների մեջ և լցվում ոչ թափանցիկ արկղի մեջ: Աճուրդում հաղթող մասնակից է համարվում այն մասնակիցը, որի մասնակցի վկայականին համապատասխանող համարը աճուրդավարը առաջինն է հանում արկղից:

36. Աճուրդային հանձնաժողովը աճուրդի արդյունքների ամփոփման մասին կազմում է արձանագրություն:

Աճուրդային հանձնաժողովի անդամը կարող է գրավոր ներկայացնել հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը:

37. Աճուրդում հաղթող ճանաչված անձի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից աճուրդի արդյունքների արձանագրությունը չստորագրելու, արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում հետագա վճարումները չկատարելու և (կամ) հաղթող ճանաչվելու պահից 10 օրվա ընթացքում պայմանագիր չկնքելու դեպքերում նախավճարը չի վերադարձվում:

38. Աճուրդային հանձնաժողովին աճուրդի մասնակիցների մասին հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ենթակա չեն հրապարակման՝ առանց աճուրդի մասնակիցների համաձայնության:

2. ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ԱՃՈՒՐԴ

39. Աճուրդը վարում է աճուրդավարը, որը հրապարակում է վաճառվող կամ վարձակալության տրամադրվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային գինը, աճուրդային քայլի չափը, որը սահմանվում է գույքի մեկնարկային գնի 5 տոկոսից ոչ ավելի չափով:

40. Նշված քայլերով մեկնարկային գինն իջեցվում է այնքան, մինչև մասնակիցներից մեկը, բարձրացնելով իր վկայականին համապատասխանող համարը, տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու կամ վարձակալելու մասին:

41. Աճուրդի ժամանակ վաճառքի գինը կամ վարձավճարը չի կարող իջեցվել մեկնարկային գնի 50 տոկոսից:

42. Աճուրդի հաղթող է համարվում այն մասնակիցը, ով առաջինն է տալիս իր համաձայնությունը հայտարարված գնով գույքի գնման կամ վարձակալման մասին:

43. Աճուրդը համարվում է չկայացած՝ մեկնարկային գինը 50 տոկոսի չափով նվազեցնելու պայմաններում գնորդների կամ վարձակալների բացակայության դեպքում:

44. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը պարտավոր է 30 րոպեի ընթացքում ներկայացնել մասնակցի վկայականը և վճարել մեկնարկային գնի կամ վարձավճարի առնվազն 5 տոկոսի չափով նախավճար (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարման միջոցներով), որը սահմանված ժամկետում հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է համայնքի բյուջեի համապատասխան հաշվին: Գնորդը կամ վարձակալը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով:

45. Վճարման դեպքում՝ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը հաշվարկվում է հաղթողի (գնորդի կամ վարձակալի) կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

46. Եթե աճուրդի հաղթողը չի կատարում սույն կարգի 44-րդ կետի պահանջները, ապա նրա մուծած մասնակցության վճարը չի վերադարձվում, և նա զրկվում է աճուրդին հետագայում մասնակցելու իրավունքից ու դուրս է հրավիրվում դահլիճից: Այդ դեպքում գույքի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից:

47. Եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, ապա աճուրդավարը վիճակահանությամբ որոշում է աճուրդում հաղթող համարված մասնակցին:

48. Վիճակահանությամբ աճուրդում հաղթող համարված մասնակցի որոշումը կատարվում է հետևյալ պայմաններով.

հանձնաժողովի անդամները բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ որոշում են միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին, այնուհետև մասնակիցների մասնակցի վկայականին համապատասխան համարը պարունակող քառաձալ թղթերը դրվում են ծրարների մեջ և լցվում ոչ թափանցիկ արկղի մեջ: Աճուրդում հաղթող մասնակից է համարվում այն մասնակիցը, որի մասնակցի վկայականին համապատասխանող համարը աճուրդավարը առաջինն է հանում արկղից:

49. Աճուրդային հանձնաժողովը աճուրդի արդյունքների ամփոփման մասին կազմում է արձանագրություն:

Աճուրդային հանձնաժողովի անդամը կարող է գրավոր ներկայացնել հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը և համարվում է դրա անբաժանելի մասը:

50. Աճուրդում հաղթող ճանաչված անձի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից աճուրդի արդյունքների արձանագրությունը չստորագրելու, արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում հետագա վճարումները չկատարելու և (կամ) հաղթող ճանաչվելու պահից 10 օրվա ընթացքում պայմանագիր չկնքելու դեպքերում նախավճարը չի վերադարձվում:

51. Աճուրդային հանձնաժողովին աճուրդի մասնակիցների մասին հայտնի դարձած տեղեկությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ենթակա չեն հրապարակման՝ առանց աճուրդի մասնակիցների համաձայնության:

VII. ԱՃՈՒՐԴԻ ՉԿԱՅԱՑԱԾ ԿԱՄ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼԸ

52. Աճուրդը համարվում է չկայացած, եթե լուրջ չի վաճառվում, այդ թվում՝ ոչ մի գնորդ չներկայանալու դեպքում, ինչպես նաև եթե հաղթող ճանաչված անձը և (կամ) աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելուց, ապա տվյալ լուտի վերաբերյալ աճուրդը համարվում է չկայացած:

53. Լուտի վերաբերյալ աճուրդն անվավեր կարող է ճանաչվել միայն դատական կարգով:

«Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-5-րդ, 8-9-րդ և 14-րդ հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը, շահագրգիռ անձի պահանջով, դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

Աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդը կազմակերպվում և անցկացվում է սույն օրենքով սահմանված կարգով:

Լոտի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում նոր աճուրդի պայմանները կարող են փոփոխվել, եթե աճուրդի անվավերությունը կապված է եղել նախնական որևէ պայմանի հետ, ինչպես նաև եթե տեղի է ունեցել լոտի վիճակի փոփոխություն, այդ թվում՝ կապված դրա վերաբերյալ իրավունքների և պարտականությունների փոփոխման հետ:

2և 1

Հ Ա Յ Տ

ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

(հայտը ներկայացնող անձի անվանումը, անունը, ազգանունը, հասցեն)

1. Ծանոթանալով «__» _____ 20__թ. կայանալիք աճուրդում վարձակալության տրվող գույքի մասին հրապարակված տեղեկություններին՝ ցանկանում եմ մասնակցել _____ աճուրդին:

(գույքի անվանումը, հասցեն)

2. Աճուրդում հաղթելու դեպքում պարտավորվում եմ՝

1) աճուրդի մասին արձանագրությունն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում վճարել վարձակալվող գույքի համար իմ կողմից առաջարկված վարձավճարը,

2) հաղթող ճանաչվելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայանալ Սպիտակի համայնքապետարանի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին գույքն ընդունելու և վարձակալության պայմանագիր կնքելու համար:

3. Համաձայն եմ, որ սույն հայտի 2-րդ կետում նշված պայմանների չկատարման դեպքում իմ մուծած նախավճարը չվերադարձվի:

4. Իմ ռեկվիզիտներն են՝ _____

(իրավաբանական անձի հաշվի համարը, բանկը կամ ֆիզիկական անձի հասցեն, հեռախոսահամարը)

5. Կից ներկայացվում են.

1) հիմնադիր փաստաթղթի և պետական գրանցման վկայականի պատճենները (իրավաբանական անձանց համար), իսկ ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճենը,

2) վարձակալության աճուրդի մասնակցության տեղական վճարի անդորրագրի պատճենը,

4) հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը):

Հայտատու (լիազոր ներկայացուցիչ)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

«___» _____ 20__թ.

Հ Ա Յ Տ

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

(հայտը ներկայացնող անձի անվանումը, անունը, ազգանունը, հասցեն)

1. Ծանոթանալով «___» _____ 20__թ. կայանալիք աճուրդում օտարվող գույքի մասին հրապարակված տեղեկություններին՝ ցանկանում եմ մասնակցել

_____ աճուրդին:

(գույքի անվանումը, հասցեն)

2. Աճուրդում հաղթելու դեպքում պարտավորվում եմ՝

1) աճուրդի մասին արձանագրությունն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում վճարել աճուրդում գույքի համար ձևավորված գինը,

2) հաղթող ճանաչվելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայանալ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին, գույքն ընդունելու և առուվաճառքի պայմանագիր կնքելու համար:

3. Համաձայն եմ, որ սույն հայտի 2-րդ կետում նշված պայմանների չկատարման դեպքում իմ մուծած նախավճարը չվերադարձվի:

4. Իմ ռեկվիզիտներն են՝

_____ (իրավաբանական անձի հաշվի համարը, բանկը կամ ֆիզիկական անձի հասցեն, հեռախոսահամարը)

5. Կից ներկայացվում են.

1) հիմնադիր փաստաթղթի և պետական գրանցման վկայականի պատճենները (իրավաբանական անձանց համար), իսկ ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճենը,

3) աճուրդի մասնակցության տեղական վճարի անդորրագրի պատճենը,

4) հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը):

Հայտատու (լիազոր ներկայացուցիչ)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

«___» _____ 20__թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ) ՄԱՍԻՆ
 _____ 20 թ.

Գույքի՝

1. Անվանումը, հասցեն _____
2. Աճուրդային վաճառքի հանելու մասին համապատասխան որոշման համարը և տարեթիվը _____
3. Մեկնարկային գինը _____
4. Աճուրդային քայլի չափը _____
5. Աճուրդում առաջարկված առավելագույն գինը _____
6. Աճուրդի մասնակիցների թիվը _____
7. Գնորդի (վարձակալի) նշահամարը _____

8. _____
 (մասնակիցների՝ ֆիզ. անձի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հասցեն, հեռախոսահամարը)

_____ (իրավ. անձի անվանումը, ռեկվիզիտները, հասցեն, հեռախոսահամարը)

Հաղթողը _____
 (ֆիզ. անձի անունը, ազգանունը, իրավ. անձի անվանումը, ռեկվիզիտները)

_____ (ստորագրությունը)

Աճուրդային հանձնաժողովի նախագահ _____
 (անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Անդամներ _____
 (անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

_____ 20 թ.

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



[Handwritten signature]

Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804.
Հեռ: (0-255) 2-25-00, ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» դեկտեմբերի 2020թ. N° 296

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 147
ՈՐՈՇՄԱՆ ԱՌ ՈՉԻՆԻՉ ԼԻՆԵԼԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով և 4-րդ մասով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2014 թվականի ապրիլի 28-ի թիվ 147 որոշման ընդունման պահին «Սպիտակի կարի արտադրական միավորում» կազմակերպություն գոյություն չի ունեցել, և տվյալ դեպքում պարզ չէ, թե ով է հանդիսանում որոշման հասցեատերը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տեղեկանքը՝ որոշում եմ.

1. Հաստատել Սպիտակի քաղաքապետի 2014 թվականի ապրիլի 28-ի «Սպիտակի կարի արտադրական միավորմանը հատկացված հողամասի հիմքերը վերականգնելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 147 որոշման առ ոչինչ լինելը:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:



Handwritten signature

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 14
ք. Սպիտակ